

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 27 ” հունվարի 2012թ.

№ 9- Ա

### ՊԱՏՎԱԿՈՐ ՍՅՈՒՆԵՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի "Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին" N7 որոշման, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գինված ուժերի կայացման, արցախյան պատերազմի ժամանակ Սյունիքի մարզի ինքնապաշտպանական ուժերի կազմավորման, հանրապետության հարավ-արևելյան սահմանների պաշտպանության գործում ներդրած ավանդի և հայոց բանակի 20-րդ տարեդարձի կապակցությամբ Պատվավոր Սյունեցու կոչում շնորհել


1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանին.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին առընթեր բարձրագույն սպայական հանձնաժողովի անդամ, գեներալ-մայոր Վլադիմիր Հայրապետյանին:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից թխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ



2012թ. հունվարի 27  
ք. Կապան